

Առաջուածութեան յաւիտեանս և յաւիտենից յաւիտեանս:

Քրիստոս Աստուած, բարիխօսութեամբ սրբոյն Յովհաննութեծի Հայրապետին ողորմեա ամենայն հաւատացելոց սրբոց:

## ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

### ԿԻՐԱԿՈՒԱՅ ՀԱՆԳՍՏՈՒԹԻՒՆԸ

ԵՒ

ՆՈՐԱ ՆՇԱՆԱԿՈՒԹԻՒՆԸ Ս.ՌՈՂ.ԶՈՒԹԵԱՆ ՀԱՄԱՐ.

( Ե-Ր-Ա-Ն-Ք-Ա-Բ-Ա )

9. Մկնակների համակարգութեան գիտողութեան անցնելը տալիս է մեզ պատեհ գիտուած մի կողմ թողնելու առանձին հիւանդութիւնների գաւառը, ուր մինչեւ այժմ՝ մենք պտտում էինք, և անցնել հիւանդութիւնների ընդհանուր վարդապետութեանը: Եթէ մինչեւ այժմ՝ մենք գլխաւորապէս պնդում էինք կտրուկ կերպով արտայայտուած նշանակների վերայ ինչպէս են սրտի արատները, արիւն ժայթքելը, բարակացաւը ու վենական հանգոյցները ևլն. իսկ այժմ՝ ընդհանրապէս գիտելով, մենք կուենանք այս բոլոր գեղաքերում այսպէս ասած՝ երկրորդ աստիճանը: Իսկ իրբեւ առաջին աստիճան յերեան են գալիս այնպիսի գրութիւններ, որ աւելի պակաս արտայայտուած նշանակների՝ և միայն ընդհանուր տկարութեան աւելի կամ նուազ ազօտ զգացողութեան բնաւորութիւն ունին: Հասարակաց բարբառով՝ մերոնք իւրեանց վիճակը նկարագրում են հետեւալ բառերով՝ «ոչ մի բանի պէտք չեմ», միւսերը՝ բոլորովին խախտուեցայ» ևլն: Այսպիսի անձերը, հազիւ թէ վերադառնում են աշխատանքից, ընկնում են անկողին և մնում են անշարժ պառկած որքան հանգամանքները թոյլ են տալիս: Երբ նոքա վերստին վեր են թռչում տեղից աշխատանքի գնալու՝ նոքա թարմացած չեն զգում իւրեանց հանգստութիւնից, նոքա նման են աւելի փշացած կամ չնացած մեքենաների և գառնում են աշխատանքին առանց կորովի, հակառակ ցանկութեան ու յօժարութեան: Այսպիսի

վիճակը կոչւումէ «թուլութիւն կամ ջարդուածութիւն» : Խնչպէս պէտք է մեկնել այս վիճակը: Ամենքին յայտնի է առածգականութիւն կոչուած բնական երեսոյթը, որ անշունչ իրերից աւելի մեծութիւնով յերեան է գալիս կառւչուկի մէջ: Մեր մկնակները նման են մի տեսակ կառւչուկի, որ կենդանութիւն ունի: Մեռած կառւչուկի շերտը, մշտապէս մի և նոյն ուղղութեամբ ձգուելով, կորցնումէ վերջապէս իւր ձգողականութիւնը, դադարումէ կծկուել, գառնումէ չոր ու կոտրուկ: Նոյնը լինումէ և մեր կենդանի մարմնու մկնակների թելերի հետ, որոնց թուլանալը և արտայայտումէ «ջարդուածութեան», զգացողութիւնով: Թուլացած մկնակը արդէն կարողութիւն չունի այլ ևս արիւնի շրջանառութեան օգնելու, և որովհեան սիրտը նոյնպէս մկնակ է, ուստի ընդհանուր ջարդուածութիւնը հարուածումէ արիւնի շրջանառութիւնովն է լինում: Սակայն միայն մկնակները չեն առածգականութիւն ունեցող՝ աւելի կամ նուազ առաձգական են և բոլոր մնացած անկուածները չբացառած կրծիկները ու սոկորները: Կրծիկի մասին ի գէպ է նկատել՝ թէ այն կրծիկների շերտերը, որոնք կապումեն ողնաշարի առանձին օղերը, երկարատե կանգնելուց կարող են այնքան սղմուել, որ մարմնուերկարութիւնը կարող է նուազել ամբողջ կէս դիւյմով իսկական չափից: Սակայն ամբողջ մարմնու յատուկ եղած առածգականութեան հոգին ջլային համակարգութեան մէջն է, որի մասին մնումէ մեզ խօսել: Բայց նախապէս՝ մենք պէտք է ունենանք մի փոքր հասկացողութիւն անկուածների զննուելու որակութեան նիւթական աստառի վրայ. նորա «Հիւլէական կազմութեան» վրայ: Բանի էութիւնը անկուածների միջի ջրի պարունակութեանը մասին է: Որը և կարելի է իմանալ արդէն մարմնու ամբողջ արտաքին տեսքից:

10. Խնչպէս կառւչուկի թուլացած կտորը չոր ու կոտրուկ է դառնում, իսկ այնպէս էլ թուլացած մարմինը ընդունումէ չոր ու փուխր կերպարան, երեսը՝ առողջութեան ընդհանուր վիճակի այս հայելին՝ ներկայացնումէ չոր իրը կաշեայ ծածկոցներ, յոգնած նուազած գծեր, աղօտ՝ պղտոր աչքեր. սորա

Հակառակ թարմ ու զուարիթ անձերը ունին հիւթաւատ պլառ պլղուն մորթի, որ կենդահութիւն է ստանում շարժուն գէմքից փայլուն աչքերից. և այս առանձնայատկութիւնները վերաբրում են այսպիսի անձերի առաձգականութեան: Թէ այս ամենը սերտ կապուած է անկուածներում պարունակուած ջրի հետ. թուի թէ՝ միանգամից քիչերը կհասկանան, ինչպէս և քիչերը մոքով անց են կացնում թէ խմելու լաւ ջուրը մեր մորմնու համար գլխաւոր ոննդական միջոցն է:

Մարդուս մարմինը կանոնաչափ պայմանների մէջ իւր ծանրութեան  $\frac{1}{3}$  մասը ջրից է կազմում. չափահաս մարդու մումիան այսինքն ջրից զրկուած մարմինը 15 փունտից աւելի չի քաշում: Քաշի 1000 մասերից թոքերը պահանջում են 930 մասը ջուր, ջղերը՝ 800, աչքի ցանցաթաղանթը մինչև իսկ 927: Քիմիայից յայտնի է՝ թէ ջուրը բազկացած է երկու ծաւալ ջրածնից և մի ծաւալ թթուածնից. իսկ վերջինս՝ ինչպէս մեղ արդէն յայտնի է՝ ստացւումէ օդից՝ թոքերով. այստեղից հետեւումէ՝ թէ ջրի բաւականաչափ պարունակուելու համար առաջին արգելքը՝ ուստի՝ և մարմնու առաձգականութեան առաջին թշնամին՝ երկարատեւ և աշխատանքի հետ կցուած անբաւարար շնչառութիւնն է: Այստեղից էլ հետեւումէ և մի ուրիշ եղբակացութիւն՝ թէ մարմնու թարմանալը, առաձգականութեան նորոգուելը խոր շնչառութիւնով է լինում. թարմ ու մաքուր օդի մէջ: Նորածին մանուկը, որին անմիտ ու տգէտ դայեակները թողնում են ամբողջ ժամանակ փակ ու չհողմահարուած սենեակի մէջ, շուտով ստանումէ «կաշու և ուկրի» կերպարան: Վերջապէս՝ երբ վճռում են մանուկին դուրս հանել բայց օդը, նա սկսումէ լցուել, ուռչումէ ինչպէս հացի խմար հնոցում, ստանումէ հիւթ ու գոյն: Նոյնը վերաբերուումէ և մարդուն, որ արգելուած է ամբողջ շաբաթներ հաշուարանի կամ գրասենեակի փակ ու խեղդուկ մթնոլորտի մէջ. երբ, վերջապէս նա համնումէ տօն օրին և գնումէ շրջելու անառառում ու մարգերում, նա դրականապէս «հալուումէ» և սկսումէ զգալ՝ թէ իւր մէջ մի նոր ուժ՝ կարծես թէ՝ զեղումէ բոլոր երակներով: Այսպիսով հասկանալի է՝ թէ ինչու մարդու վրայ թուլացնող ներգործութիւն է ունենում նոյնպէս և այսպէս ասած: «Թեթև ծառայութիւնը (հաշուա-

բանի մէջ): Նա ներգործումէ յոգնեցնող կերպով, և ընդ սմին  
աւելի սաստիկ, քան մի ուրիշ ծանր ծառայութիւն, իսկ այս  
հետեւեալ պատճառով՝ որովհետեւ նստուկ կենցաղի հետ կցոր-  
դուած է արիւնի աւելի գանդաղ ընթանալը վենաներով. ուս-  
տի անկուածների մէջ հաւաքւումէ շնչհեղձ կամ խեղդական  
արիւնը (տես վերը), որը թմբեցնումէ ջղային համակարգու-  
թիւնը: Սակայն բացի սորանից անկուածների մէջ բարդուումեն  
հիւթեր էլ, մանաւանդ մկնակների մէջ. բարդուելով այս հիւ-  
թերը հաւաքումեն իւրեանց մէջ զանազան արդէն սննդառու-  
թեան համար անպիտանացած նիւթեր՝ այսպէս ասած՝ « կըզկը-  
զանքը կամ սննդառութեան աղբը « կաթնային թթւոյթ, թը-  
թու ֆոսֆորաթթու քալիոն): Այս աղբը չի կարող պահպանել  
թարմութիւնը և առածգականութիւնը, ընդհակարակը՝ նա  
սորան անումէ թոշնած ու փիրտծ, ևս աւելի սաստկացնումէ  
ընդհանուր ջարդուածութեան կամ թուլութեան զգացողու-  
թիւնը: Աղբով ծանրաբեռնած այսպիսի արիւնը մենք կոչում  
ենք խօնջութեան կամ յոգնածութեան արիւն, ածխային թը-  
թուոյթով ծանրաբեռնած արիւնից զանազանելու համար: Իւ-  
րաքանչիւր ոք, որ սովորել է մի փաքը գիտողութիւն անել իւր  
վրայ, լաւ-ծանօթ է այն յոգնածութեան՝ որը յառաջանումէ  
մի տեղում երկար նստելուց, և որից ազատումեն ոչ թէ  
պառկելով ու քնելով, այլ արագ ու կայտառ քայլելով: Սոյնա-  
նման հանգիստ կերպով աշխատող մարդիկ ընդհանրապէս աւե-  
լի յանախ են յօրանջում քան զանազան արուեստաւորներ:  
Եթէ մոտաբերենք թէ ինչ եմ ասել կրծքի ներծծութեան մասին,  
հասկանալի կլինի՝ թէ ինչու յօրանջելը կարելի է ընդունել իբ-  
րև բնազդական յուշարարութիւն մարդուն խոր շունչ առնե-  
լու կարեւորութեան համար, այսինքն թէ հարկաւոր է սաստկա-  
ցնել գործողութիւնը ներծծող զօրութեան կողմից, որը դուրս  
է բերում՝ անդամներից խօնջութեան արիւնը և փոխանակու-  
մէ նոր թթուածնով հարուստ արիւնի: Տօների զբօսնելու ժա-  
մանակ ճրագով էլ չէք գտնիլ յօրանջող, թէպէտեւ զբօսողնե-  
րից շատերը ամբողջ շաբաթուայ ընթացքում ամէն օր յօրան-  
ջումէին:

Խեղդական և խօնջական արիւնը ներգործելով միասին՝ փո-  
խումեն ջղային համակարգութեան ինչպէս վիճակը, այնպէս

էլ անկուտածների լարուածութեան ասոփինանը և նպաստում են այն ընտելական տկարութեան զարգանալուն, որը հասարակութիւն առումէ տեւական բեվմատիզմ, և սխալաբար առգըրումէ միջնորդութիւնը յառաջացած «ցրտահարութեան»։ իրավէս միջնորդութիւնը բաց օդը իսկական միջոց է այս տկարութեան դէմ։

Նախընթաց դատողութիւնը վերաբերումէր աւելի ջրի բովանդակութեան որոնկութեանը կամ՝ եթէ մէկին աւելի հաճոյ է մննդարար հիւթի որակութեանը։ Քանակութեան պակասութիւնը՝ գլխաւորապէս երեան է գալիք ջղային համակարգութեան խանգարուելուց։ ինչպէս այս կարելի է նկատել ձեռքով աշխատող մարդկանց մէջ։ Այսպիսի «քրոնքով առօրեայ հայը ճարող» բաննորը կորցնումէ մորթու ու քրոնաթորգեղձերի, նոյնպէս և թոքերի միջնորդութեամբ, մեծ քանտկութիւնով ջուր, որը այնքան կարեռ է իւր ջղերի համար։ Գոլորշու և շնչառութեան ճանապարհով մարմնուց գուրսեկող ջրի քանակութիւնը՝ սոլորական պայմանների մէջ՝ հաւասար է  $2\frac{1}{2}$  ֆունտի 2 ½ ժամուայ ընթացքում, իսկ աշխատող մարդու մէջ նա կրկնակի՞ն առև առաւել՝ է աւելանում, նրով հետեւ արհեստանոցները և հաշուարանները բովանդակումեն վատ օդ, ուստի նոցա մէջ աշխատողները դրականապէս չորանումեն։ Փորձով իսկ ապացուցած է թէ ջղային թելերի դիւրագրգռութիւնը բարձրանում է նոյն չափով, որ չափով նուազումէ նոցա մէջ ջրի քանակութիւնը։ Արհեստաւորները տանջւումեն ոչ այնքան հաշուարանի գրագիրների «բեվմատիզմից», որքան յանկարծ եղող ցաւերից՝ ծակոցներից, խիթերից ու նգոցից, որոնք իրավէս միայն տեղական արտայայտութիւն են ամբողջ ջղային համակարգութեան չորանալուն, և կարող են ճիշդ բժշկուել ուժգնապէս բաց օդի մէջ շարժուելուց, քան անկողնում պարկելուց։

Յետոյ ես դեռ ցոյց կտամ՝ թէ ինչու ջղերի այս տեսակ չորանալուն օգնումէ նոյնպէս և անկանոն պահեցողութիւնը (փէհրիզ) այսինքն սակաւ ջուր խմելը։ Այժմ աչք ածենք ջղային համակարգութեան առանձին մասերի ջուր կորցնելու վերայ։

11. Սկսենք հոտաւութեան ջղից։ որը ընդունումէ իւր

տպաւորութիւնները ռունգներով և որը թոքի առողջութիւնը պահպանողն է ինչպէս լեզուն ու կատիկը պահպանում են ստամպսի առողջութիւնը, զննելով ամէն ինչ՝ որ մոնումէ ներս։ Սակայն մինչդեռ կերակաւրը և խմիչքները կարող են զննուել միենոյն ժամանակ աչքերից և ձեռքերից։ Թոքի սընունդը միայն զննուումէ հոտառութիւնից։ Եւ ստկայն՝ այս բոլոր զգացողութիւններից աւենանուրբը տկարանումէ ոչ միայն հոտառութեան ջղի ցամաքելուց, այլ և իւր պակաս վարժուելուցը, բարձի թողի անելուցը, որը սկսուումէ գեռ ևս գպրոցական կեանքում։ գասարանների վատ՝ անպիտանացած օդը, արդէն վաղ ժամանակիներից սկսումէ ընտելացնել քիթը այնպիսի տպաւորութիւնների տանելուն, որոնցից պէտք է մենք սարսափով խոյս տայինք հոտառութեան ջղի կանոնաւոր պաշտօնատարութեան ժամանակ։ Ինչպէս հաշուարանի գրադիրը, այնպէս էլ բանտորը դուռս գալով իւրեանց ննջարանի աղբային մթնոլորտից, անցնուամեն աշխատանոցի նոյնպէս աղբային մթնոլորտը. իսկ այստեղից գարեջրանոց, որի օդը իսկի լաւ չէ նորանից, որի մէջ քնումեն և աշխատումեն. Վերջ ի վերջոյ մարդիկ դադարումեն զանազանել նաև այնպիսի գարշահոտութիւններ, ինչպէս գուանօն, ծծմբային ջրածին, նեխած ուկրներ՝ որոնցից թարմ ու անսովոր մարդու սիրութ խառնումէ և շունչը արգելում։ Բայց բաւական է, որ այս խեղդած զգացողութիւնը ընկնի լեռնային ու անտառային օդի մէջ, և նո յանկարծ արթնանումէ իւր մեռած թմրութիւնից. ռունգները սկսումեն յակամայիցս լայնանալ, և մարդստանումէ գէթ մի փոքր հասկացողութիւն թոքային՝ օդօն (այսպէս ասւումէ թթուածնի երեք ծաւալի քիմիապէս միանալը + 0<sub>3</sub>) պարունակող՝ անունդի անոշահոտութեան վերայ։

12 Հոտառութեան ջղից յետոյ գալիս է լսողութեան ջիղը, որը փոփոխութիւն է կրում իւր նախասենեակում, լսողութեան արտաքին անցքում կատարւող մի քանի իրողութիւնների պատճառով։ Հարկաւ՝ թմրկաթաղանթի պատռուելը ուժգին ու մրրկալի տպաւորութիւնների ազդեցութեան տակ՝ ինչպէս պայթացն է՝ բացառիկ երեսի թներին է պատկանում։ Սակայն ինչպէս յաճախ գանգամաներ է լսում բանտորներից ականջի խշոցի կամ թշոցի վերայ և այլ սոյնանման առաւել

կամ նուտղ յայտնի զգացողութիւնների վերայ։ Այս զգացողութիւնները երեան են գալիս ականջի ճարպի կամ մոմի ցամաքելուցը՝ կամ սորտ նուազ արտաթորելուցը։ Զրի պակասութիւնը աւելի զգացող է ինքը լսողութեան ջիզը, որը կարելի է պատկերացնել բաղկացած անհուն նուրբ միմեանցից մօտ պառկած թելերից (թուով մօտաւորապէս 3000), բայց միմեանցից ջրով այնպէս են անջատուած, որ իւրաքանչիւր լարը՝ երբ ձայնը դրսից հասնումէ նորան՝ կարող է առանձին տառանուել։ Զուրբ հարկաւոր է այս լարերի կանոնաւոր տառանուելու համար։ Ուսուի կարելի է միայն զարմանալ և բաղդաւորութիւն համարել, որ ծանր լսողութիւնը ևս աւելի յաճախ չի պատահում շամաքած մշտկ գասակարգի մէջ, ինչպէս այս իրապէս կայ։ Այս ինչ նուրբ լսողութիւնը, աղմուկ ու ձայնը՝ լսւ ու վատ երաժշտութիւնը զանազանելու զգացողութիւնը շատ սակաւ մարդկանց մէջ է նկատուում։ որովհետեւ լսողութիւնն էլ հոտառութեան նման վերջին ծայր բթանումէ արհեստանոցների գործարանների, աղմուկի մէջ լինելուցը, փողոցային աղմուկիցը՝ զանգակի ձայնիցը՝ սուլելուցը ևլն, Մինչդեռ սովորական մարդը հանգստութեամբ է վերաբերուում գէպի այս աղմուկները՝ ինչպէս օրական հացի վերայ եղած մի տեսակ անխուսափելի յաւելուած։ Շօվէնհառուերի նման մոտածողները չեն գտնում բաւական զօրաւոր խօսքեր՝ նկարագրելու մտրակի հասարակ հարուածից սոտացած անախորժ տպաւորութիւնները, որին նոքա «ուղեղ կտրող ու միոք մեռցնող», անուն են տալիս, և որը՝ ամեն՝ իւր մէջ մոքի հեռաւոր նմանութիւնունեցող՝ մարդ պէտք է զգայ իբրև ցաւ։ Բայց անկասկած մի որ և է կիրակի օր ճաշից յետոյ անտառում հանդարտութեան մէջ անցկացրած ժամանակը, որը բնդհատուումէ միայն թըռչունների երգից և սաղարթի մէջ քամուց ծնւող սօսաւիւնից, աղդումէ ինչպէս ցաւացտոյց բալասաննաեւ սովորական մարդուն՝ իւր բթացած լսողութիւնով՝ տառապած ու վիրաւորուած լսողութեան ջղի վերայ։

13. Լսողութեան զգացողութիւնից յետոյ գալիս է տեսողութիւնը՝ որի բերողը ակնագունդն է, որ ոչ մի ձկնից պակաս կարօտ չի ջրի, եղջերակին թաղանթը՝ աչքի այս պատուհանը, բացառապէս՝ ջրով ծծուած լինելուն է պարտական իւր թա-

փանցկութիւնը, առանց որի պիտանի չի լինում լուսի ճառագայթները միջով անցնելու, և դառնումէ մի պղտոր՝ թաղանթ, ընդունակ միայն զանազանելու տաք ու ցուրտը: Նմանապէս և ինքը տեսողութեան մակերեւոյթը՝ ցանցաթաղանթը՝ բաղկացած է լսողութեան ջղի նման բաղմաթիւ ևս առաւել նուրբ ջղային թելերից, որոնք լողումեն հեղուկի մէջ: Ինչ կարող են անել զանազան պաշտպանող և ուղղող ակնոցներ, երբ այս թելերը կարօտութիւն են քաշում իւրեանց համար ամենակարեւոր նիւթի, որ է ջուրը:

և դէպ է յիշել՝ թէ աչքը կարող է ոչ միայն ջրի բացակայութեանը չտանել, այլ և արիւնի յորդալիութեանը, որ պահպանում է զարկերակների ճկուելուց, և աչքի վերայ ունի նոյն ազդեցութիւնը, ինչ որ սա ունի վահանաձև կամ պկի գեղձի վերայ (տես վերը՝ խպիպ գոյանալու և պկի հաստանալու մասին), աչքը գուրս է գալիս ակնափոսից: Վերջի ժամանակը յաճախ ու յաճախ գիտողութիւններ են լինում, որոնք վերաբերւումեն մշակ դասակարգի մէջ աչքաշուածութեան կամ աչքապշածութեան (εκρήταλπις) զարգանալուն: Աչքածուածութիւնը, խպիպի և սրտի բախոցի հետ միասին կազմումեն այն, ինչ որ ասւում է բապէտով ախտ: Հիւանդանալը սկսում է սրտի բախոցով, յետոյ գոլիս է պկի այտոցը և ապա աչքաշուածութիւնը: Եթէ հիւանդը դադարում է աշխատել և անցնում է մի քանի անգործ շաբաթ հիւանդանոցում, ակնագունդը վերսուին դաւունում է իւր կանոնաւոր տեղը, յետոյ նուազում է խպիպը և վերջը դադարում է սրտի բախոցը:

14. Վերեւը զննուած զգայարանները յայտնի չափով մի տեսակ շոշափողներ են մեր մուաւոր կեանքի, որի կենդրոնական գործարանը գլխի ուղեղն է, վերջինս ունի 81 տոկոս ջուր և վերին աստիճանի զգայուն է ցամաքելուն: Դժուար չի երեւակայել թէ ամէն վնասու որ հարուածում է յիշած շօշափիչները, գրեթէ անմիջապէս հարուածում է գլխի ուղեղը, որին վկայ է և փիլիսոփիի վերոյիշած խօսքերը: Ուղեղին ինչպէս մի ամբողջ բանի աջողակութիւնը կախուած է էլի իւրեան շրջապատող ջրային միջոցից (ինչպէս շրջապատուած են լողացութեան ու տեսողութեան ջղերը), որի նշանակութիւնն է պահպանել նորան՝ մարմնու դիրքի փոխուելու ժամանակ՝ ուկրային ծածկոյթի հպաւու-

բութիւնից։ Այս հեղուկը, որ կոչւումէ ուղեղառնային կամ գանգառնաշարային, գտնւումէ և ողնաշարի անցքի մէջ, ուր նա ծառայումէ նոյնպէս մէջքի ուղեղի պաշտպանութեան։ Ինչպէս մոտածութեան գործարան, գլխի ուղեղը ունի նոյնպիսի աննիւթական առաձգականութիւն, որպիսին մենք ի նկատի ենք ունեցել զգայարանների վերաբերութեամբ՝ խօսելով զգայութիւնների բժանալու վերայ։ Գլխի ուղեղը նոյնպէս բժանումէ։ այսպիսի բժութիւնը յառաջանումէ միատեսակ մըտաւորական պարապմունքից։ Ինչպէս անշնչաւոր կառւյուկը կարօտ է լարուելու և թուլանալու փոխանցութեանը, այնպէս և մոտաւորական ուժը պահանջումէ տպաւորութիւնների փոխանցութիւն։ Բացի սորանից նշանաւոր է նոյնպէս և մոտաւոր աշխատանքի որակութիւնը՝ կան բարձր և ստոր մոտաւոր շահեր, կայ ուղեղային մեքենական «հոգեսպան» գործունէութիւն և այնպիսի գործունէութիւն, որ նորոգումէ, զարգացնումէ, կենդանացնումէ մեր միտքը։ Առաջին տեսակի օրինակ է հաշուեպահութիւնը, աղիւսակներ կազմելը և լ. երկրորդ տեսակի օրինակ՝ լաւ գրքերի լնթերցանութիւնը, երաժշտութեան պարապելը, բնական երեսոյթների դիտելը, ուրախ խօսակցութիւն հասարակութեան մէջ։ Շատ յաջող է լնտելական աշխատանքի կամ ծառայութեան բաղդառութիւնը «ստնագորու» (tritiummalle) հետ, որի վերայ մի քանի երկիրներում աշխատում են տաժանակրութեան դատապարտուածները, որոնք չեն թողնում այս մեքենան, նոյս զգացողութիւնները բժանում են, բժանումէ և ուղեղը։ մարդկային անձնաւորութիւնը գառնումէ այս ինչ «համարը»։ գործարանական կազմուածքը գառնումէ ինքնաշարժ մեքենայ, որ մարդու նման է միայն արտաքին կերպարանքով։

Մի քանի տարի աւտոջ Բուկառուի մէջ, խորտակուեցաւ մի արտակարգ երկաթուղու գնացք սլաքուղղորդի (սրբութակ) անհոգութեան պատճառով։ Հասարակական կարծիքը իսկ այն ժամանակ այս տարաքաղղ պատահարը (որ սոյնանման բազմաթիւ պատահարներից մէկն է) կախուած համարեց յափազանց պահանջներից։ որը երկաթուղղային վարչութիւնը գնումէ ստորակարգ ծառայողների առաջ, որոնք միշտ ու շարունակ ստիպուած են օրական շամ աշխատել։ Երկաթուղու սլաքուղ-

զորդը «սպիտակ ստրուկի», ամենալաւ տիպարն է: Թող մատնացոյց չանեն մեզ այս թշուառների համեմատաբար թեթև աշխատանքը. խորհուրդ ենք տալիս պինդ մտապահ լինել՝ թէ ուանազօրու վերայ աշխատելուց զգացողութիւնների բժանանալը ոչ այլ ինչ է, եթէ ոչ մտաւորական թուլութիւնն կամ մտտւորական ջարդուածութիւն: Դժբաղդաբար՝ իմ տասնամեայ ծառայութիւնը՝ իրեւ երկաթուղու բժիշկ՝ ստիպումէ յայտարարել՝ թէ երկաթուղու վարչութիւնը բոլորովին զսւրկ է հասկանալու այն անընդունակութիւնը դէպի աշխատանքը, որը արտայայտուումէ աւելի ենթակայական զգացողութիւններով, քան թէ ուրիշների համար տեսանելի նշանակներով:

Աշխատելու կարօղութեանը էլի մի տեսակ վնասուելը կապ ունի այն վիճակների հետ՝ որոնց մենք միացնումենք անկուածներում եղած ջրի պակասութեան անունի տակ:

15. Անկուածների վերոյիշած ցամաքելը կարելի էր հեռացնել նշանաւոր կերպով. եթէ բանտորը զօռ ատր ուտելու այն նիւթերը, որոնք կարող են իւրեանց պակասած ջուրը լրացնել: Այսպիսի մննդարար նիւթեր են՝ ջուրը, կաթը և թարմ պըտուղները: Մենք վերելը արդէն յիշեցինք՝ թէ որքան տարածուած է ջրի իրեւ սննդարար նիւթի՝ մեծապէս կարեռութեան անհասկացողութիւնը. այժմ աւելացնենք՝ թէ իրավէս խմելու լաւ ջուրը գրեթէ հազուագիւտ երեւոյթ է: Ոչ սակաւ հազուագիւտ պէտք է համարել և կաթը: Խակ պտուղները, նոցա բարձր գների շնորհիւ վաղուց արդէն դարձել են իսկական շռայլութեան առարկաներ: Բայց առաւել ցաւալի է այն անտարակուսելի իրողութիւնը՝ թէ՝ եթէ բնութեան բոլոր այս թանկագին պարզեները երկրի վերայ թափուէին լինչպէս հին մանանայի անձրեւ, բանւորները էլի մոքով չէին անց կացնիլ նոցա մօտենալ: Նոցա սիրաը ուղում չէ ջուր, նոցա մի ուրիշ զաւը քան է հարկաւոր—նոցա հարկաւոր են գարեջուր կամ օղի: Գործարաններում գրեթէ իւրաքանչիւր բանւոր ունի մի շիշ դարեջուր կունատակին, կամ մի սրուակ օղի գրպանում: Հաշուարանների նեղ անցքերում օրուայ ամէն ժամանակ՝ գընում գալիս են սպասաւորները, որոնք բերումեն հա բերում նորից գարեջրով լի ըմպանակները հաշուարանների պաշտօնեաների համար: Օրական աշխատանքից հեռանալով, մարդիկ գը-

նումեն ոչ թէ գէպի աղբիւրը կամ հորը, այլ պանդոկը կամ գարեջրանոցը, ուր ժամանակը անց են կացնում մինչեւ՝ համարեայ՝ կէս գիշերը, այնտեղ ներշնչում են ևս առաւել վնասակար, ևս առաւել թունաւոր յատկութիւններ ունեցող օդ, քան արհեստանոցների կամ հաշուարանների օդը իւրեանց երակները լցնում են, և իւրեանց ջղերը յարգում են խեղգական և խոնջական արիւնով:

Մենք՝ հարկաւ՝ հեռու ենք այս սովորութիւնը մի տերակ բնածին արատ համարելու, ինչպէս այս անումեն մի քանի բարպարագանուր նշանզումի մի պահանջ է, որ թելագրութեան պահանջը բժշկի աշքերի առաջ մի ձգտողութիւն է, որ ունի իւր արդարացնող բնազդումի մի պահանջ է, որ թելագրումէ ներկայ բոպէի զգացողութիւններից։ Այս զգացողութիւնը յառաջ է գալիս մարմնու թուլանալուց և մանաւանդ անօթային համակարգութեան թուլանալուց, որը պահանջումէ նոր գրգիռ կամ աշխոյժ։ մի լաւ կում կօնեակ, կամ մի ըմք պանակ փրփրագէզ գարեջուր, և ցանաքած կոկորդը նորից ըզգումէ իւրեան ախորժապէս թաց, թուլացած սիրոն էլ նորից աւոյգաբար աշխատումէ, զարկերակն էլ նորից զուարթօրէն բախումէ, մկնակների համակարգութիւնն էլ ստանումէ վերստին առաձգականութիւն՝ կարճ ասած՝ ամքողջ մեքենան գործումէ այնպէս, ինչպէս նա պէտք է գործի նոր վառելիք գնելուց յետոյ։ Թէ մեքենան ընդ ոմին կարող է ջեռուցած լինել առաւել, քան թէ նշանակած չափը՝ և թէ շոգեկաթույին կարող է սպառնալ ճայթելու վտանգ, սորա մասին մշտիը դատողութիւն չի անում, և հազիւ թէ կարելի է պահանջել և սպասել նորանից այսպիսի դատողութիւն։ Կիովինա արդեօք իւր վարւողութիւնը, եթէ նաև մենք ավացոյց տայինք նորան գիտնական հողի լերայ՝ թէ ախորժութիւն զգացը հաւասար նշանակութիւն չունի օգտակարութեան հետ։ Աւամորթները անդքծովեան շաքարի տնկարաններում ոչ մի կաթիլ օդի՝ կամ գարեջուր չեն գործածում, խմումեն միայն շարապ, և մնում են ուժեղ ու տոկուն։ Խնչուիս փորձը ցոյց է տալիս, մեր երկրում (Դերմանիայում) դինորները առաւել լաւ են տանում չուագնացութիւնը և մնում են առաւել թարմ ու զուարթ, երբ նոքաչեն սատանում ոչինչ ոգելից խմիչք, իւրաքանչիւր ոտով ճանապարհ

գնացող դիւրաւ կարող է համոզուել՝ թէ՝ ջուր պտուղներ ու կաթ գործադրելով՝ օրական կանցնի առաւել շատ վերստեր և կմնայ ընդ սմին առաւել (թարմ) քան գարեջուր, գի՞ ի կամ ողի գործադրելով։ Արդարեւ՝ վերջիններից պատճառաւած արիւնաբաշխ համակարգութեան դրդելը նշանաւոր է իւր թռուցիկ լինելովը։ Խոկ աւելի տեսական է լինում թուլութիւնը, որ յառաջանումէ խոնջական արիւնով մարմնու յագենալից։ Արուեստաբար յառաջ բերած իոնջութիւնը պահանջումէ նոր արուեստական աշխոյժ ևլն։ Եւ սորա մէջ գաղուած է ահագին վտանգ։ Թէ ոգելից խմիչքների գործադրութիւնը սովորութիւն կդառնայ, և ընդ սմին յառաջադիմաբար տճող սովորութիւն։ Գարեջուր սովորաբար գործադրողը ժամանակի ընթացքում սկսումէ աւելի ևս աւելի նստել ըմպանակի առաջ։ Գերյագութիւնը սովորացնումէ արիւնը առաւել բարձր ճնշողութեան պահանջին, և մինչև որ չի հասած այս «համսրը», գարեջուր խմնղը շարունակումէ ծարաւ զգալ ու խմել։ Նա խըմումէ, չնկատելով՝ թէ վառումէ իւր մեքենան իւր ուժից բարձր։ Մինչև որ մի գեղեցիկ օր անօթային խողովակը չի պայթիլ և մեքենան չի կանգնիլ յաւիտեան։ Ալքոհոլի ընտելական գործադրութիւնը ոչ սակաւ օգնումէ նոյնպէս մոտաւորական գործունէութեան բթունալուն։ Ժողովրդական նկատողութիւնը՝ թէ «գարեջուր \*») իւմելը մարդուս յիմարացնումէ։ բառացի ճիշտ է։ Սակայն միանգամ էլ կյիշենք՝ թէ արբեցութիւնը խստապէս պատճառական կտպ ունի չափազանց երկարատեաշխատելու հետ։

## III

ՊԱՀԵՑՈՂՈՒԹԵԱՆ ՄԱԿԱԲԵՐՈՒԹԻՒՆՆԵՐ.

Այժմ հաշուենք կարճօրէն բոլոր այն վնասները, որոնք անընդհատ աշխատանքի անխուսափելի հետեւանքն են և որոնք մենք ընդարձակօրէն նկարագրել ենք նախորդ գլխում։ Նոյացուցակը այս է՝

(\*) Նոյն անումն առատ գինի և օղի խմելը, պյան տեղերում, ուր գարեջուր չկայ.

1. Մարմնու հիւթերի խառնուելու խանգարումը, սորա հետ էլ արիւնի գունափոխութիւնը. այստեղից էլ խեղճ, ցամաք, գունատ արտաքին տեսքը (1):
2. Շնչհեղձական և խոնջական արիւնի հաւաքուելը (2 և 10):
3. Փոշուց յառաջացած հազը և չոր հազը (3):
4. Թոքերի և մինակների անբաւարար մաքրուելը (4, 5 և 9):
5. Զարկերակային արիւնի յետագարձ կանգառութիւնը, արիւնի ճնշողութեան բարձրանալը, հակումն դէպի արիւնաթքութիւն ևլն. (6 և 7):
6. Վենական արիւնի կանգառութիւնը. թանչային ուռուցներ և վենակների լնդլայնումն (8):
7. Զգայարանների և մտաւորական գործունէութեան բթանալը, հակումն դէպի արբեցութիւն (11—15):
- Այս բոլոր ձախորդութիւնների միացած գործունէութիւնը տանսւմ՝ դէպի առաձգականութեան նուազելը մարմնու մէջ, ուստի և հետեւումէ մարդկային կեանքի ծավիկ շրջանի կարճանալը նորա աշխատելու լնդունակութիւնով, և ընդմիջաբար ամբովշ կեանքի տեսողութեան կարճանալը: Սակայն հին բժշկական դրութիւնը արդէն հաստատումէր՝ «Quod caret alterna reaque, durable uon est», «այսինքն ամեն ինչ, որ գրկուած է փոփոխաբար հանգստանալուց երկարատև չէ»:
- Ի՞նչ է «հանգիստը», կամ «հանգստութիւնը»: Եթէ այս քալուկ հասկացողութիւնը լուծենք և նորա տարրները գրենք, այն ժամանակն կերևի, թէ այս գործողութիւնը բաղկացած է՝
  - 1) Բոլոր հիւթերի և արիւնի գոյնի թարմանալուց:
  2. Շնչհեղձական և խոնջական արիւնի արտաքսելուց:
  - 3) Մորթու գործունէութեան գրգւուելուց, թոքի մկնակների մաքրուելուց:
- 4) Կանոնաւոր զարկերակային արեան շրջանառութեան վերականգնելուց և արեան շրջանառութեան վերականգնումից:
- (Աւ. 5) Զգայարանների գործունէութեան ու հոգեկան գործարանի վերակենդանանալուց:
- Իսկ հանգստանալու լնդհանուր գործողութեան հետեանքն է մարմնական ու մտաւորական վերանորոգութիւնը,
- Փորձ անենք այժմ պայմանաւորուել՝ թէ ինչքան ժամանակ է հարկաւոր այսպիսի վերանորոգութեան համար:

Այս նպատակի համար վեր առնենք Ելի կառւչուկի կտորը, որը արդէն մեզ համար մկնակների օրինակ է եղել, և հաւասարացնենք նորան ամբողջ մարդկային մարմինը։ Ասենք թէ մենք գործ ունենք մի առաձգական ժամաւինանման օղակի հետ, որ յաճախօրէն գործ են դնում թղթապանակը ամրափակելու համար և լն. մենք գիտենք՝ որ այսպիսի օղը կարողէ մի որոշ ժամանակի ընթացքում մնալ ձգուած մօտաւորապէս երկարութեան մի երրորդ մասով իսկ թղթապանակի վերայից հանելուց յետոյ էլի նորից կդառնայ իւր միջին երկարութեանը։

Ընդհակառակը մենք կզգուշանանք այս օղակը կրկնապատիկ երկարատեւ ձգելուց, որովհետեւ գիտենք՝ որ այս դիպուածում նա կկորցնի իւր առաձգական զօրութիւնը և շատ թոյլ միայն կպահի թղթապանակը։ Մենք գիտենք՝ թէ նաև օղակի չտփաւոր ձգելը չպէտքէ տեսի անսահման, թէ չէ կկորչի նորա առաձգականութիւնը, և թէ օղակը բաւական ժամանակ է պահանջում։ Հանգստանալու կամ դրսուուելու, որ նորից աւելի կամ նուազ պիտանի դառնայ իւր պաշտօնը նորոգելու, Շատ հին ու երկարատեւ գործադրուած օղակների վերայ մենք քիչ վստահութիւն ունենք և նոյա հանգստանալուց յետոյ։ և յօժարութեամբ նախապատիւ ենք համարում փոխել նրանց։ Խորհուրդ ենք տալիս նոցա, որոնք ծանօթ չեն այս փորձերին, անձամբ փորձ անել և համոզուել այն ճշտութեան ու անփոփոխութեան մէջ, որոնցով վերեւը թուած հետեւանքները յաւաջ են գալիս։ Սոյնանման պարզ և առերևոյթս չնչին ցուցողութիւնները կարող են մարդկանց համոզել առաւել աղդու կերպով և արագ, քան որ և իցէ բարձրիմաստ հաշուատեսութիւնը։ Այս տեղ հարկաւոր է նկատել՝ թէ մեր ցուցողութիւնը «նրբաթելի», տեսութեան մի հանրամատչելի փոփոխութիւնն է, որը (նրբաթելը) առողջ պայմանների մէջ մնումէ ամուր («ձիգ») իսկ ախտային պայմանների մէջ լինումէ թուլացած («անձիգ») տեսութիւն, որը հոչակաւոր Փր. Հոփմանին հիմք է եղել իւր մարդկային մարմնու հիւանդանալու ամբողջ վարդապետութեան համար։

Եթէ մենք այս փորձը փոխադրենք աշխատող մարմնու տածուլութեան վիրայ, այս ինքն մարմնու, որի առաձգականու-

թիւնը դանուումէ երկարատու գործօն լարուածութեան մէջ՝  
մենք պէտքէ ամենից առաջ ընթերցողին յիշեցնենք երկու սայ-  
լավարի պատմութիւնը՝ որը պատմենք առաջի գլխում և որը  
ակնյայտնի կերպով մեկնաբանող նշանարիտ առակ է։ Ընթեր-  
ցողի ուշադրութիւնը առանձնապէս դարձնումենք այն հան-  
գամանքի վերայ՝ թէ ձիերը ամբողջ օրը չէին աշխատում, այլ  
ամեն օր անցնումէին միայն մօտաւորապէս Յ կամ Գ մզոն, ու-  
րեմն լի օրերն էլ ունենումէին քաւական ժամանակ հանգը-  
տանալու։ Նախ և առաջ՝ այստեղից հետեւումէ՝ թէ մեր քըն-  
նելի մասնագիտական հարցի հայեցակէտից, աշխատութեան  
ժամերի ազատ միջոցները օրուայ ընթացքում և գիշերուայ  
հանգստութիւնը մեղքուովին չեն վերաբերուում։ Արդարեւ՝  
բանելու օրուայ ընթացքում աշխատաւորի վիճակ ընկնող այս  
դադարները կամ շնչարիկները համապատասխանումեն միայն  
լարուածութեան այն նուազագոյն թուլանալուն, որ մենք թոյլ  
ենք տալիս մեր կառւչուկի օղակին նորա պիտանութիւնը պահ-  
պանելու համար, և որը ինքն իրան հասկանալի պայմանն է նո-  
րա վերստին ձգուելու կարելիութեան համար։ Առանց կերա-  
կուք ընդունելու կոմոնաւոր ժամանակամիջոցների անկարելի  
կլինէր մոտածել աշխատանքի վերայ, նոյնը վերաբերուումէ և  
գիշերուայ հանգստանալուն, առանց որի մարմինը կքայքա-  
յուէր կարճ ժամանակի ընթացքում։ Այսպիսով՝ հանգստա-  
նալու միջոցները լի օրերում վերաբերուումեն աշխատանքին  
պարզօրէն ինչպէս հարց ու պատասխանը, ինչպէս մրճի բարձ-  
րանալ ու իշնելը։ Խոկ իրական հանգստութիւնը հայթաթւումէ  
միայն աշխատանքի լիակատար կանգնեցնելովը, քսան ու չորս  
ժամ լիապէս դադարեցնելովը։ Աւելի յարմար է շաբաթուայ  
եօթերորդ օրը հանգստութեան նուիրել։ Փորձ անենք մեկնե-  
լու, թէ ինչու իսկապէս եօթերորդ օրը, և ոչ թէ մի ուրիշ օր։  
Մովսէս՝ մնալսվ հաւատարիմ իւր մետոդին, մնարդկանց ա-  
ռաջին գնումէր իրեւ օրինակ Ֆիրոջ։ Առոտծուն իւրեան, որ  
վեց օրում ստեղծեց աշխարհը, խոկ եօթերորդ օրը « հանգը-  
տացաւ իւր քոլոր գործերից, որ արաւ»։ Կարելի է որ Մով-  
սէսը հասել է այս առողջապահական պահանջին իւր սեպհա-  
կան դատողութիւններով, և բնութեան վերայ արած դիտո-  
ղութիւններով։ Բայց նոյնպէս կարելի է որ Մովսէս ուղղակի

հեռեւել է այն գաղափարին՝ թէ լուսինը իւր ձեզ փոխում ամեն եօթը օր, և այն իրողութեան վերայ՝ թէ մոլորակների թիւը հաւասար է եօթի, ուստի և մոցրել է ժամանակի զուգընթաց բաժանուելը ամիսների ու շաբաթների։ Թէ եօթը թիւը ունի մի առանձին հրապոյը մարդկային խելքի համար, նորանից է երեւում, որ մեծանուն յոյն մօածողը՝ Պիթագորաոր՝ տալիս էր եօթը թոււին կրիտիկական նշանակութիւն ամեն մարմնական առարկաներում։ Բժիշկ և փիլիսոփայ Կաբանիսը փորձ արեց ապացուցանել այս՝ մասնաւորապէս բժշկական փորձերում գործադրելով։ բժշկութեան յետագայ պատմութիւնը նոյնպէս պարունակումէ մի վարդապետութիւն, որի համաձայն մարմնու տաքութեան տառանուելը կատարումն եօթնօրեայ շրջաններով։ Պրուդօնը դատումէ հետեւեալ կերպով՝ «Եթէ շաբանթը կարճացնել մի օրով՝ հանգստութեան պահանջը դեռ ևս անհրաժեշտ չի երեխլ։ Եթէ շաբանթը երկարացնել մի օրով՝ չափազանց խոնջութիւն կյառաջանայ. Եթէ ամեն երեք օր կէս օր տօն կարգել՝ յառաջ է գալիս անկարգութիւն և անհաւասարչափութիւն, եթէ ամեն 12 օր աշխատելուց յետոյ երկու տօն օր տալ՝ բանւորները կծուլանան, այս ել նորանից յետոյ երբ նոցա տառապել են չափազանց աշխատանքով և լու։ Մեր ներսածութեան մէջ մի քանի ուրիշ վկայութիւններ բերինք եօթներորդ օրը տօնելու օգտին։ Միանալով մեր նախորդների հետ՝ ես հաստատումեմ հետեւեալը. այն պարբերութիւնը՝ որի ընթացքում մարդկային մարմնու ուժերի լարուելու կարողութիւնը հատնումէ պրօֆեսսիօնական միատեսակ գործունէութիւնից, հաւասար է վեց օրուայ։ Եօթներորդ օրը նոյնպէս աշխատանքի մէջ անցնելը հասցնամէ չափազանց լարուելուն և այստեղից լարուելու գործօն կարողութեան աստիճանաբար քայքայելուն։ Ընդհակառակը՝ եթէ եօթներորդ օրը նուիրումէ հանգստութեան, այս լարուելու կարողութիւնը դառնումէ մեր մարմնու համար ամրութեան աղքիւր, և երաշխատթրութիւն առաւել մեծ ջանքի դիմանալու, քան դիմացկոտութիւնն որ ցոյց են տալիս աշխատութեան չստայած և քայքայելող մեքենաները։ Թուլութեան փոխարէն մեր մարմինը ստանումէ ոյփ և առաձգականութիւն, աշխատանքը դառնումէ ամրացնող միջոց և աւելի առողջարար է.

թւում անգործութիւնից, բնախօս Ֆլուրտնոր նաև թոյլ է տալիս՝ թէ մարդս՝ կանոնաւոր մարդս, որի գործարանները ոգտուումեն պատշաճաւոր չափով աշխատանքից ու հանգուռութիւնից, կորող է իւր կերպնքը շարունակել մինչև 100 տարի։ Կրօնը եօթներորդ օրը կոչումէ ։ Տիրոջ օր ։ առողջապահութիւնը կարող է օգտուել մեր ներածութեան մէջ յիշած Գեօթէի խօսքերից, և կոչել կիրակին « մարդու օր »։

## IV

## ՀԱՆԴՍՏՈՒԹԻՒՆԸ Ի՞ՆՉՊԵՍ ՊԵՏՔ Է ԼԻՆԻ։

Թէ ինչպէս է պէտք հանգուռանալ՝ ես կարծումեմ, թէ կարդալով նախընթաց բոլոր ասածները, ոչ ոք չի մոլորուել և չի մոածել թէ հանգստանալը միայն կրաւորականապէս ոչինչ անելումն է։ Ոչ՝ ինչպէս չձգուած կառւչուկն էլի մնումէ մի փոքր յարմար լարուելու վիճակի մէջ, այնպէս էլ մարդկային մարմինը կարող է հանգստանալ միայն այն յատակագծով, որին ամենից աւելի լաւ կիրի « աշխատանք փոխելու » անուն տալ։ Այս փոփոխութիւնը՝ հանգստանալու օրուայ, « աշխատանքը՝ դարձնելով զուարճութիւն՝ պէտք է ոչ միայն որակութեանը, այլ և քանակութեանը վերաբերուի. վերջինս մնալով համեմատաբար ոչ մեծ, պէտք է այնքան լինի, որ ախորժապէս լարուելու զգացողութիւն յառաջացնի։ Մեր միտքը օրինակներով պարզելու համար՝ կասենք՝ թէ մինչև անգամ կիրակի օրը հեռու (մի քանի մղոն) զբօննելը հանգստութիւն է այն մարդու համար, որ զբաղուած է ատաղձագործի, կարելու և գրաւոր աշխատանքով. գիրք կարդալը նոյնպէս « աշխատանք » է, ինչպէս և հաշիւներ քցելը. բայց մի կողմից փոխուելու առթիւ, միւս կողմից ախորժելի բովանդակութեան առթիւ՝ այս աշխատանքը գառնումէ թարմացնող հանգստութիւն։ Մանկական ըլքոցը ու աղմուկը, որ այնչափ ձանձրացնումէ նոյնա, որոնք ամեն օր առաւօտից մինչև երեկոյ այս լուսմեն, ինչպէս ճշմարիտ երաժշտութիւն է հնչում ընտանիքի հօր համար, որ ամբողջ շաբաթը տառապումէր արհեստանոցի ժխորից և լն։

Այստեղից երեսում՝ թէ հանգստանալու եղանակը զանազան տեսակ պարապմունքների համար պէտք է զանազան լինի։

Սակայն այս եղանակների զանազանութեանը հետ կայ մէկ կէտ, որի մէջն ոգքա պէտք է համաձայնուեն՝ ինչպէս մենք տեսանք նախընթաց գլուխներում ամենքի համար հարկաւոր է շնչառական գործարանների այսինքն կրծքի լիակատար վարժուելը։ Հառարակ խօսակցութեան լեզուն մինչև անգամ թելագրումէ այս կարևորութիւնը, լեզուն, որ յօժարութեամբ թեթեւութեան կամ համագուտութեան ամեն զգացողութիւնը մի բանից յետոյ զետեղումէ կրծքում կամ սրտում, ում յայտնի չեն «ազատ շունչ քաշել», «թեթեւացնել կուրծքը, սիրոր և լն», գարձուածները։ Հանգստացող կուրծքը ինքը հակամէտ է այնպիսի մարդողութիւնների, որոնք հիմնաւորապէս արտաքսումեն երակներից շնչեղձ արիւնն և ապահովացնումեն թթուածընի առաւել կատարեալ մուտքը թոքերի մէջ։ այսպիսի մարդողութիւններին, որոնք օգնումին թոքերի հողմահարուելուն (օդամաքրուելուն), պատկանումեն երգեցողութիւն, ծիծաղ, խօսակցութիւն, պերճ ատենախօսութիւն, ճառասացութիւն և լն։ Թոքերի աշխուժիւ աշխատելու ազդեցութեան տակ, շուտով և մեր մարմինը սկսումէ զգալ իւրեան թեաւորուած, մեր մէջ յառաջանումէ հակամիտութիւն գէպի շարժողութիւն, գործունէութիւն, խեղկատակութիւն։ որոնց մասին արդէն յիշել ենք մեր գրքի սկզբում։ Պատմումին՝ թէ նաև Սոկրատէսի՝ հին աշխարհի այս ամենամեծ մոտածողի մէջ, ամեն վերջացած գործից յետոյ, ցանկութիւն էր զարթնում պարելու այսինքն ստիպելու ճնշուած կուրծքը աւելի ազատ շանչ քաշելու սաստիկ շարժողաւթեան ազդեցութեան տակ։

Թէ «ազատ բնութիւնը ժողովրդի ճշմարիտ դրախտն է» և թէ բանւոր մարդը ամենից լաւ կիրակի օրը կարող է յարութիւն առնել բաց օդում, այս մասին մենք արդէն խօսել ենք նախընթաց երեսներում։ Այստեղ մեզ մնումէ միայն շեշտել այս դրութեան վերայ։ Պատեհ է յիշել երկրորդ գլխում մեր ասածները ոգելից խմիչքների վերայ։ յիշենք՝ թէ բաց թարմ օդի հետ միասին ցամաքած, թուլացած ջղային նրբաթելերի համար ամենալաւ կենդանութիւն տւող միջոցը թարմ ջուրն է, որի հետ կարող են մրցել միայն կաթը և պտուղները։ Թող մարդիկ՝ գէթ տօն օրերը՝ ժուժկալութիւն ունենան ջայցելեւ։ լու պահպակները և գինետները. գինետունը փշացնումէ հան-

գաւութեան բոլոր գործը:

Մեր հարցի գետինը չժողնելով՝ մենք պէտքէ կանգնենք էլի մի կէտի վերայ, որ կապուած է ջրի գործադրութեան հետ։ Ջրի կենսականնշանաւորութիւնը՝ իր մնադական միջոցի արդէն զննուած է մեզանից բաւականին ընդարձակ։ մեզ հետաքրքրումէ այժմ ջրի՝ իր մարմին մաքրելու և ամրացնելու միջոցի նշանակութիւնը, իր այն բանի միջնորդի, որ ասւումէ մորթու օդամաքրութիւն։ Մաքրութեան նշանակութիւնը էապէս միշտ ծանօթ էր ժողովրդական ամբոխին։ Սորա ապացոյց է՝ ի միջի այլոց՝ նշանաւոր անգլիական առածը՝ Clearness is godliness — այսինքն մաքրութիւնը բարեպաշտութիւն է։ Հին կտակարանի օրէնսդիրը իւր ժողովրդին հրամայումէր մարմինը լսւանալ մեծ ջանքով։ Բոլոր բժշկական գիտութեան տարեգիրներում յիշուել ու պահպանուել է Հիպոկրատէսի ասածը՝ «Ճուրը կեանքի կէսն է»։ Հին Հռովմում իւրաքանչիւր ամենատիլոր աղքատը ամեն օր աւազանում լուացւումէր։ Եթէ գործ դնենք նոր ժամանակի վերաբերութեամբ Լիբիսի \* ) յայտնի չափը, որի համաձայն սապոնի գործադրութիւնը ուղիղ յարաբերութեան մէջ է գտնուում մի երկրի քաղաքակրթութեան աստիճանի հետ։ կտեսնենք՝ թէ մենք առաւել յետ ենք գնացել, քան յառաջ։ Դեռ 15 դարի մէջ Գերմանիայում տիրումէր պաշտօնապէս հաստատած մի սովորութիւն՝ ամեն շաբաթ օր գնալ վարսավերայի մօտ՝ ոչ միայն մօրուքը սափրելու, այլ և ջերմ տւազան ընդունելու։ Բոլոր բանւորները առանց բացառութեան շաբաթը վերջանալուց յետոյ գնումէին տուն ոչ այլապէս, եթէ ոչ այսպիսի բաղնիսից յետոյ։ Այն ժամանակներում սպիտակեղէնը գործումէր բրդից, որի կեդու ծծող յատկութիւնը կարող էր շատ նպաստել այսպիսի սովորութեան հաստատուելուն։ Երբ քաթանից ու բամբակեղէնից կարած սպիտակեղէնը ներմուծւումէ, այս սովորութիւնը կամաց կամաց անհետանումէ։ Պէտքէ աւելի ափսոսալ այս յետադիմութեանը վերայ, մանաւանդ որ մորթու հիմնաւոր տածողութիւնը պէտք է յայտարարուի իբրև առաջին առողջապահական։

(\*) նշանաւոր քիմիկոս էր։

պատուիրանք. աւելի ներկայ ժամանակում, երբ քարածուխի վառելը, շոգեարժ մոքենաները ու անթիւ նոր տեսակի արուեստաշահութիւնները մեծաքանակ փոշի ու կեղտ են յառաջացնում \*):

Ինչ որ ասացինք թոքերի փոշու ներգործութիւնից վնասուելու մասին, նոյնը գործադրելի է և մորթու համար. մորթու վնասուելը յայտնւումէ միայն նուազ կտրուկ և նուազ նկատելի նշանակներով։ Սակայն եթէ ուշ դարձնենք՝ թէ ամեն գաճից շինած մի ձեւ որքան կարճ ժամանակում կորցնումէ իւր տեսքը, նաև կանգնած լինելով մի հասարակ բնակելի սենեակում, կարող ենք պատկերացնել մեզ այն վնասակար ազգեցութիւնը, որին ենթարկւումէ բանւորի մորթին՝ իւր արհեստանոցի օարասափելի օդի մէջ գոնուած ժամանակը, Այս կէտը աւելի շօշափելի է պատկերանում մեզ՝ եթէ գործարանի բանւորի շորին այս կամ այն տեղը զարկենք։ Հարուածը բարձրացնումէ փոշու ամբողջ թուխով։ Պատշաճ է ասել՝ թէ երբեմն ինչ գարշահոտութիւն է տարածում բանւորի առօրեայ հանդերձը։ Այս փոշին քրոնքի հետ միանալով ծածկումէ մորթու ծակոտիները (որոնք 2 միլիոնից աւելի են թուով)։ արգելք է լինում գոլորշիանալուն, գրգռումէ մորթու զգերը։ Մորթային ելունդները, դժուարաբոյժ խոցերը, ներքնամորթային բազմաբջիջ\*\*) անկուածի թարախումները՝ սովորական երեսոյթներ են բանւորների գասակարգերի մէջ։ Սակայն մորթային գոլորշիացումի ճնշուելուն առթիւ, որի օրական քանակութիւնը հառասար է 500—700 գրամի, տկարանումեն նոյնպէս և ներսի գործարանները։ Սակայն կարեւոր է յիշել՝ թէ բանը ոչ միայն փոշու մէջն է, այլ թէ և մորթու կանոնաւոր մաքրելու անհոգութիւնը ոչ պակաս վնասակար է։ Մինչեւ անգամ ամէն

(\*) Հայաստանի այն գիւղերում, ուր փայտ չկայ, վառումեն աթար, որ շատ ծուխ է տալիս՝ հետեաբար փոշի ու կեղտ։ աթարը բնակարանի մէջ գտնուած թոնրում վառելով, ուր շատ անգամ կերակուր են եփում, տունը լցումէ եխով և դորշիով։ օդը թունաւոր է գառնում թէ թոքերի համար և թէ մորթու համար։ Խոկ մարմինը լուանալու սովորութիւն չկայ։

(\*) Եճեւեա—cellula բառը թարգմանումենք բջիջ բառով։ Կլնչատեա թարգմանում ենք բազմաբջիջ անկուած կամ բջիջանկուած։

լու ացուելով, ջուրը պղտորւումէ, որովհետև իւր մէջ պարունակումէ մորթուց թափւող թէփը, մազեր, ազեր, գործաքանական կեղտ։ Սակաւ անգամ կպատահի, որ փոխած սպիտակեղէնը իւր կշռի 100 գումարին չունենայ 4ից մինչև 5 միունու կեղտ։ Նատ կարելի է հին յոյները նեսսեան \* ) շապիկի վերայ ունեցած իւրեանց առասպելովը, որի հագնելը հիւանդութիւն էր բերում, կամենումէին տեսանելի անել իսկապէս կեղտուս սպիտակեղէնի անառողջ յատկութիւնը։ Թէ ինչի կարելի է հասնել մեծ ջանքով՝ հիմնաւորապէս մորթին տածելով, ամենից լաւ ցոյց է տալիս ծխնելոյդ մաքրողների օրինակը։ Ամբողջ շաբաթ թաւալ գալով անառելի կեղտի մէջ, այս արհեստաւորները աւելի սատարի պահանջ են զգում՝ շաբաթ օրը իւրեանց մարմինը մաքրելու։ Հետեւանքը այն է, որ չի կարելի ցոյց տալ ուրիշ արհեստաւորների մի դասակարգ, որ ներկայացնէր աւելի կտրուկ հակադրութիւն իւր տօն օրուայ մաքուր տեսքի և ամբողջ շաբաթուայ ընթացքում եղած պրոֆեսսիօնական կեղտի մէջ։ Ծխնելոյգ մաքրողների մորթին շատ անգամ ուղղակի զարմացնումէ իւր թարմ սպիտակութիւնով ու կարմրութիւնով, և մորթային հիւանդութիւնները գրեթէ յայտնի չեն նոցա մէջ։ Բայց մաքրութեան գործը ուրիշ է արհեստաւորների մէջ։ Ատաղձագործը, մեքենագործը, ծխախոտի բանւորը, սովորաբար՝ բաւականանումէն արգէն նորանով, որ երեկոյները ինչպէս և իցէ մաքրումէն կեղտից միայն երեաները ու ձեռքերը։ Հաշուարանների ու գրասենեակների աշխատաւորները դառնուումէն աւելի ու աւելի երկշուղ ջրից և աւելի ու աւելի մոռանուումէն սապոնի ու սպունգի գործադրութիւնը։ Խօ ճանաշումէի վարպետներ, որոնք գրականապէս հըպարտանումէին՝ թէ ոչչ մի անգամ չեն եղել բաղնիում հարսանիքի օրից։ Երբ այս տողերը ես գրումեմ՝ յորդ անձրեւ է

(\*) Նեսսոս յունական առասպելով ձիամարդ էր, որ կամենալով փախցնել Հերակլէսի կնոջ Դէժաններին, նետահար սպանուեցաւ Հերակլէսից։ Բայց մահից առաջ Դէժաններին տուաւ իւր շապիկը թունով թամափած էրը հաւատարմութեան թալիսման։ Երբ Հերակլէս դաւաճանեց, Դէժաններան ուղարկեց նորան վերսիշած շապիկը, որը Հերակլէս հագնելով, իսկոյն ցաւ զգաց և հրամայեց այրել իւրեան հետա լերան վերայ։

գալիս. ես մօտենումեմ լուսամուտին և տեսնումեմ փողոցում աղաւնիների երամ. թևերը սաւառնած, նոքա վազվը զումեն անձրւային վտակների տակ՝ աշխատումեն լաւ թաց լինելու, լաւ լուացուել։ Սակայն ես չեմ սկսել խօսիլ լողանալու և լուացուելու վերայ ընդհանրապէս. իմ առաջարկութիւնը սահմանափակումէ այս առարկայն շօշափելովը միայն, որքան նա կապ ունի կիրակի օրուայ հանգստութեան հետ. ուստի ես ասումեմ՝ տուէք բանւորին իւր կիրակին. և հաւատացէք, նա ինքն իրան կհասնի այն կէտին, որ կսկսի շաբաթերեկոյն հիմնաւորապէս լուացուել ոտից մինչև գլուխ, և այսպիսով առաջի քայլը կանի դէպի մարմնու լիակատար հանգըստութիւնը։ Քունը լողանալուց յետոյ ճշմարիտ թարմութիւնն է բանւոր մարդու համար. մորթու բոլոր ճակոտիները սկսում են գործել ամբողջ ուժով, և միւս օրը մորթին՝ իբր նոր ճընուած՝ սկսումէ մրցել թռքերի ու մկնակների հետ մարմինը մաքրելու ասպարիզում. նորա ներսը հաւաքուած կղկղանքի ու աղբի հեռացնելու ասպարիզում։ Մի նկատողութիւն էլ աւելացնենք սովորաբար լողացողները շատ անգամ յայտնում են՝ թէ «աւազան առնելը թեթեացնումէ ուղեղը»։ բժիշկները միայն կարող են հաստատել այս վկայութեան տառացի ճըշտութիւնը։

Բայց կիրակի օրուայ հանգստութիւնը պահպանելուց ոչ միայն առանձնապէս իւրաքանչիւր անձի մասնաւոր կեանքն է փոխում իւր ամբողջ կերպարանքը, այլ փոխւումէ և բոլոր երկրի կերպարանքը։ Անգլիայում ճանապարհորդողները միաձայն հաստատում են՝ թէ ևոնդոնում տների ծովը կարելի է տեսնել սուրբ Պօղոսի տաճարից միայն երկուշաբթի առաւատը։ Միւս օրերը բոլորը ծածկուած է անթափանցելի մառախուղով։ Այդդիտողութիւնը մեկնուումէ՝ հարկաւ նորամով, որ կիրակի օրը գործալարների ու արհեստաւորների՝ իւրեանց ծխով, գոլորշիով ու փոշիով՝ փակուելը մաքրումէ մթնոլորտն և թոյլ է տալիս թարմ մոքուր օդին մօտենալ։ Այսպէս ասելով՝ այսուղղ մեծ չափով լինումէ նոյնը, ինչ որ լինումէ այն դիպուածում, երբ մենք բաց ենք անում լուսամուտը՝ սենեակը, որտեղ շատ հիւրեր են եղել, հողմահարելու համար։ Ամէն ոք, որ տեսել է ամպի կամ թիսպի խաւարը, որ հեռուանց նկատումէ քաղա-

քի վերայ. անտարակոյս կհամաձայնի մեզ հետ թէ Լոնդոնի օրինակը լիապէս գործադրելի է բոլոր արհեստաշահ տեղերի վերաբերութեամբ. իսկ ներկայումն հազիւ թէ աշխարհումն շատ քաղաքներ գտնուին, ուր՝ գոնեա՝ գործարանի մի քանի ծխնելոյզ չմիսացնէին երկինքը:

Շաբանակելի,

(Թարգմ.) Բժ. Մ. Զ.

## ԱԶԳԱՅԻՆ

Երարատի Սեպտ. ամսագրի ընթերցողներին յայտնի է Պարսից արեգակնախայլ Կասրէտտին Շահի շնորհած շքանշանն առ Ա. Եհ. Հայրապետն Ազգիս, որի առթիւ տուած հրովարտակն ևս հրատարակում ենք՝ առնելով Երճագանք շաբաթաթերթից:

(ՏԵՂԻ ԿԱՔՈՑ)

ՆՈՐԻՆ ՄԵԾՈՒԹԵԱՆ ՊԱՐՍԻՑ ՇԱՀԻ ՖԻՐՄԱՆ ԱՌ ՎԵՀԱՓԱՌ ԿԱԹՈՂԻԿՈՍՆ ԱՄԵՆԱՑՆ ՀԱՅՈՑ.

Յիսուսի առաքինութեանց ժառանգորդ և հրեշտակապետաց դաստիակից Արքազնագոյն Մակար, գերագոյն Գլուխ Ա. Էջմիածնի և Ղեկալվար երկրագնդիս ամենայն Հայոց, մաղթեմք Զեղ յաւիտեան մհալ ընդ հովանեաւ Ամենաբարձրելոյն:

Ի վկայութիւն Մեր արքայական բարեհաճութեան և մտերմութեան առ Զեր Արքութիւնը, որ տոգորուած էք պետական բարձր զգացմունքներով, որ ընծայած էք Զեր բովանդակ կեանքը քահանայապետական խնամքիդ յանձնուած բոլոր հայկազեան հօտի կատարելութեան և մանաւանդ բարոյական զարգացման և շինութեան, մենք հաճեցանք և լիովին արդար ու պատշաճ դատեցինք երեւելի կացուցանել Զեր Արքութիւնը Մեր առանձին շնորհքի և յատուկ բարեմիրութեան արտայայտութեամբ առ Զեղ: